

чения, воспитания, формирования и развития. Для обеспечения эффективности образовательного процесса, учителя должны иметь резервы инструментов, которые соответствуют требованиям психофизиологических особенностей младшего школьного возраста и образовательным концепциям данного региона. Эффективным инструментом для обучения и оценки в языковом обучении рассмотрен европейский языковой портфель для младших школьников. Этот инструмент соответствует по целесообразности и эффективности процесса и международным стандартам, и местной концепции обучения и оценки знаний, умений и ценностной ориентации.

THE INSTRUCTION OF THE ALTERNATIVE ESTIMATION IN THE COURSE OF TEACHING FOREIGN LANGUAGES

E. F. TADEVOSYAN

At primary schools teaching foreign languages is a difficult process including spheres of teaching, education, formation and development. To provide efficiency of educational process of the teacher there should be reserves of instructions, which matches to the requirements of psychophysiological features of primary school age and educational concepts of the given region. The effective instruction for training and estimation in language training takes the European language portfolio for younger schoolboys under consideration. This instruction corresponds on expediency and efficiency of process and the international standards, the local concept of training and an estimation of knowledge, abilities and valuable orientation.

ԳՈՐԾԻՄԱՅ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻ

Ա. Ս. ՍԱՖԱՐՅԱՆ

ԳՊՀ Հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՆՁ

Երրորդ հազարամյակը նշանավորվում է մի շարք խորքային փոփոխություններով, որոնք տեղի են ունենում հասարակության կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Քսանմեկերորդ դարը պայմանավորում է անցումը դեպի տեղեկատվական (ինֆորմացիոն) հասարակություն, ուր որոշիչ են համարվում գիտելիքների ստեղծումն ու տարածումը: Ըստ այդմ էլ նոր խնդիրներ են ծառանում ողջ կրթական համակարգի առջև:

Ժամանակակից պահանջով առաջ քաշված կրթական խնդիրների շարքում կարելի է նշել.

- Կրթության բովանդակության որոշումը և նոր ուսումնական չափորոշիչների ստեղծումը:
- Կրթության կառավարումն ու համապատասխան իրավական դաշտի ստեղծումը:

- Կրթության մեջ նոր որակական փոփոխությունների իրականացումը:
- Ուսուցման արդյունավետության բարձրացումը:

Մանկավարժական տեսակետից՝ կարևորագույնը կրթության նոր բովանդակության, ուսուցման նոր մեթոդների, տեխնոլոգիաների ստեղծման և մանկավարժական գործընթացում դրանց կիրառման հիմնահարցն է:

Այսօր ամբողջ աշխարհի համար կրթության բարեփոխումը դարձել է առաջնային խնդիր, որովհետև գործող կրթական համակարգը ձևավորվել է 17-րդ դարում:

19-րդ դարի վերջը և 20-րդ դարը պատմության մեջ նշանավորվեցին որպես արդյունաբերության և տեխնիկայի զարգացման շրջան: Դա նոր պահանջներ առաջադրեց կրթությանը:

21-րդ դարի սկզբներին աշխարհը գնում է դեպի բաց ժողովրդավարական հասարակության կազմավորում, դեպի շուկայական հարաբերությունների վրա հիմնված այնպիսի պետության կառուցում, ուր առաջնահերթ հոգածության առարկա է լինելու մարդը: Նա պետք է ունենա մեծ ազատություններ և առավել մեծ պատասխանատվություն:

Հասարակության անդամի նկատմամբ նման պարտավորությունները պարտադրում են այնպիսի կառույցների ձևավորում, որոնք իրենց վրա կվերցնեն աճող սերդի դաստիարակության և կրթության պատասխանատվությունը: Նման կառույցների ձևավորումը ենթադրում է գործիմաց մասնագետների պատրաստում:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից մանկավարժական խնդիրների քննարկման արդյունքում այսօր մշակվել են հիմնական պահանջներ.

- Սովորողների ինքնուրույնության, ինքնակառավարման, ինքնագնահատման և ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների զարգացում (սովորել սովորեցնել),

- Սեփական շահերը պաշտպանելու կարողություններ, իրավական կուլտուրայի ձևավորում (պետության իրավական համակարգից օգտվելու կարողություններ),

- Համագործակցելու պատրաստականություն, հանդուրժողականություն ուրիշի կարծիքի նկատմամբ:

Ըստ այդմ արդի մանկավարժության առաջնահերթ խնդիրներն են.

1. Կրթության բովանդակության բեռնաթափումը, որի համար պետք է հրաժարվել՝ երկրորդական կամ հետագայում չկիրառվող և մոռացվող գիտելիքներից, այն գիտելիքների յուրացման պրակտիկայից, որոնք միայն մասնագիտական կողմնորոշում են պահանջում:

2. Ընդհանուր կրթության անհատականացում և տարբերակում, որի համար նախատեսվում է նոր կրտսեր դպրոցի մեթոդիկայի ստեղծում, ավագ դպրոցի անցում մասնագիտական կրթության, բոլոր աստիճաններում ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների փոփոխություն:

3. Զարգացող ուսուցման իրականացում, որի համար նախատեսվում է՝

- ստեղծել բոլոր պայմանները՝ սովորողների հնարավորությունների լիարժեք իրականացման համար,

- ձևավորել ստեղծված արժեքները զարգացնելու կարողություն:

Նշված պայմանների իրականացումը հնարավոր է, եթե բոլորի որակյալ կրթության համար ստեղծվեն հավասար հնարավորություններ և պատրաստվեն ու վերապատրաստվեն ուսուցչական համապատասխան կադրեր:

ԳՈՐԾԻՄԱՑ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԼՈՒԾԵԼՈՒ ՈՒՂԻ

Ժամանակակից կրթական խնդիրների լուծման համար գործիմաց մոտեցում է պահանջվում: Գործիմաց մոտեցումը մեկնաբանվում է որպես գիտելիքի և կարողության գործադրում: Կարևորվում է ոչ թե այն, թե ինչպես և ինչքան է սովորել մարդը, այլև ինչպես է կարողանում դպրոցական և բուհական կրթություն ունեցող անհատը գտնել իր տեղը հասարակության մեջ:

Գործիմաց մասնագետը՝ ի տարբերություն որակավորում ունեցող մասնագետի, ոչ միայն ունի համապատասխան գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, այլև ի գործ է այդ ամենը կիրառել մասնագիտական գործունեության մեջ:

Գործիմաց մոտեցման հիմքում դրվում է մասնագիտական որոշակի կուլտուրա՝ ինքնակողմնորոշվելու, ինքնազարգանալու կարողություն և պատրաստականություն: Նման մասնագետն իր գործունեության ընթացքում ոչ միայն կարողանում է կիրառել բոլոր գիտելիքներն ու կարողությունները, այլև զարգացման ընթացքում ստեղծում է նորը: Օրինակ՝ գործիմաց ուսուցիչը ստեղծում է նոր հնարներ, նոր մեթոդներ:

Այլ կերպ ասած, գործիմացությունն ուսումնական փորձի և կենսափորձի, արժեքային համակարգի և նախասիրությունների վրա հիմնված կարողություններն ու հմտություններն են, որոնք հնարավորություն են տալիս արդյունավետ կերպով լուծել ընթացիկ և իրական կյանքի տարբեր իրավիճակներում ծագող խնդիրները:

Մեզ հետաքրքրում է ուսուցիչների մանկավարժական գործիմացությունը, որի կարևորությունը ուղղակի ազդեցություն ունի կրթության բարեփոխման ողջ գործընթացի համար: Սովորեցնողի գործիմացությամբ է պայմանավորված սովորողի գործիմացությունը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾԻՄԱՑ ՄՈՏԵՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Գործիմաց ուսուցումն ուղղված է սովորողների մտածողության, հաղորդակցման և այլ հիմնախնդիրներ լուծելու կարողությունների ձևավորմանը:

Այսօր ամերիկյան մանկավարժական կրթությանը ներկայացվող պահանջը հնչում է այսպես. «Պատրաստել գործիմաց որակավորում ունեցող ուսուցիչներ, որոնք կունենան բարձր մասնագիտական և գործնական պատրաստվածություն»: Այս խնդրի իրականացման համար ԱՄՆ-ում ստեղծվել են համապատաս-

խան չափորոշիչներ և ուսուցիչների հավատարմագրման ազդեցության միություն:

Ռուսաստանի Ղաշնությունը ուսուցման մեջ գործիմաց մոտեցման կիրառումը տեսնում է կրթության և՛ բուհական, և՛ դպրոցական աստիճաններում:

Գործիմացությունը ներառում է ոչ միայն ուսուցման տեսական և գործնական եղանակները, այլև դրա շարժառիթային, բարոյական կողմերը, ընդհուպ մինչև ուսուցման արդյունքները (գիտելիք, կարողություն, արժեքային համակարգ):

Ժամանակակից մանկավարժության կարևորագույն խնդիրն է ոչ թե պարզել, թե որքան ձևական գիտելիքներ են յուրացրել աշակերտները, այլ հայտնաբերել ու զարգացնել նրանց գործնական-ճանաչողական կարողությունները:

Գործիմացությունները ձևավորվում են ոչ միայն կրթօջախներում, այլև ընտանիքի, ընկերների, աշխատանքի, կրոնի, մշակույթի և այլ գործոնների ազդեցությամբ:

ՀԵՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՄԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾԻՄԱՑ ՄՈՏԵՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՔ

Գործիմաց մոտեցման բաղադրիչներն են՝ մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ (գործող մասնագետ) և քաղաքացիական գիտելիքներ ու կարողություններ (ինչը պետք է պարզապես հասարակության անդամներին):

Գործիմացության երկրորդ բաղադրիչը կոչվում է հիմնական կամ հենքային գործիմացություն, որը հանդիսանում է բոլոր գործիմացությունների ձևավորման հիմքը: Սրանք կիրառվել են դպրոցում, աշխատանքում, ընտանիքում, քաղաքականության մեջ, ենթադրում են ինքնակողմնորոշում, ինքնագնահատում, քննադատական մտածողություն, պահանջում են մտավոր կարողություններ՝ վերլուծություն, քննում, հաղորդակցում, սթափ մտածողություն:

ԳՈՐԾԻՄԱՑ ՄՈՏԵՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կրթության գլխավոր նպատակը բոլոր ժամանակներում եղել և մնում է աճող սերնդին կյանքին նախապատրաստելը: Ուսուցման ընթացքում ինչ սովորեցնում ենք, մշտապես պայմանավորված է կրթական նպատակների իրականացմամբ: Նոր հասարակության պահանջներն ու հարաբերությունների ձևավորումը պարտադրում են փոփոխություններ կրթության բովանդակության մեջ: Փոխվում է «ի՞նչ սովորեցնելու» պատասխանը:

Ժամանակակից մանկավարժության մեջ ընդունված է դիտարկել ուսուցման երեք հիմնական ձևեր.

1. Դոգմատիկ կամ սերտողական ուսուցում

Սա ենթադրում է գիտելիքների պարզ մտապահում կամ գիտելիքների կուտակում: Ուսուցման այս տեսակը հատուկ էր միջնադարին: Սրա դեպքում ուսուցման մեթոդը սերտելն էր, նյութի բերանացի անելը, ուսուցչի ասածի կամ գրքում գրածի վերարտադրումը: Կրկնությունը համարվում էր առավել արդյունա-

վետ մեթոդ: Դաստիարակչական մոտեցումը մարմնական պատիժն էր: Ուսուցման այս ձևը պահանջում էր ավտորիտար մանկավարժություն: Այս մեթոդով է սովորել մարդկությունը դարեր շարունակ: Արդյունքում ոչ թե բազմակողմանի կրթվածությունն էր, այլ պարզ գրագիտությունը, որը դիտվում էր բավականին բարդ խնդիր: Միջնադարում կրթությունը դարձել էր հասարակության շատ փոքր հատվածի մենաշնորհ:

2. Բացատրական ուսուցում

Հասարակության առաջընթացը պահանջում էր ավելի մեծ թվով կրթված անդամներ: Ուստի պետք է ստեղծվեին այնպիսի նոր ձևեր ու մեթոդներ, որոնք կկարողանային բավարարել ժամանակի պահանջները: Այդ խնդիրը լուծեց չեխ մանկավարժ Յան Ամոս Կոմենսկին, որն էլ լուր աշխարհի հայտարարեց. «Ես գտա, գտա այն ձևը, որի շնորհիվ կարելի է բոլորին դյուրությամբ սովորեցնել ամեն ինչ»:

Այսպիսով, վերածննդի ժամանակաշրջանում աշխարհին ներկայացվեց ուսուցման բացատրական տեսակը: Այս դեպքում ոչ թե պարտադրվում էր ուսումնական նյութի սերտում, այլ փորձ էր արվում նյութը հասցնել սովորողի գիտակցությանը, հետո հանձնարարվում էր սեփական բառերով վերարտադրում:

Առաջարկվեց կրթության նպատակների իրականացմանը միտված առավել համապատասխան ուսուցման կազմակերպման մոդ` դաս-դասարանային ձևը:

Բացատրական ուսուցման մեթոդումը հիմք հանդիսացավ սովորողի նկատմամբ հոգատար վերաբերմունքի, տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառման ձևավորմանը:

Ուսուցման բացատրական ձևը տարածվեց ողջ աշխարհում: Ձևավորվեցին ուսուցման զննականության, մատչելիության, գիտականության, գիտակցակա-նության սկզբունքները:

3. Նորարարական` գործուն, պրոբլեմային կամ զարգացնող ուսուցում

20-րդ դարը առաջ քաշեց կրթական նոր խնդիրներ: Արդեն կարևորվում էր գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման, սովորողների հնարավորությունների և կարողությունների զարգացման խնդիրը: Ամեն անհատ պետք է կարողանար լրացնել իր իմացածը` նոր ստեղծված մասնագիտական և հասարակության պահանջարկով թելադրված գիտելիքներով: Առաջադրվում էր զարգացնել սովորողների վերլուծական հնարավորություններն ու ստեղծագործական մտածողությունը: Մարդու անելիքը դառնում է ոչ թե գիտելիքի մտապահումը, այլ դրա վերլուծումը և նորի ստեղծումը: Ուսուցման նորարարական ձևերի ներմուծումը չի նշանակում ավանդականի մերժում: Պարզապես ավանդական ուսուցման ձևերը դառնում են նորի ուսուցման միջոցներ:

Այսպիսով, արդի ուսուցման հիմնական նպատակներն են.

- գիտելիքների հաղորդում,
- գիտելիքները կիրառելու կարողության ձևավորում,
- սովորել սովորեցնել,
- ձևավորել ստեղծագործական մտածողություն:

Ժամանակակից մանկավարժությունը առաջարկում է ոչ թե ուսուցման ինչ որ մոդել, որին պետք է հարմարվի սովորողը, այլ ձգտում է ուսումնասիրել մարդուն և ուսուցման ձևերը հարմարեցնել սովորողների հնարավորություններին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀՈՒՄԱՆԱՑՈՒՄ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ

Համաշխարհային մանկավարժական միտքն իր զարգացման ընթացքում ունեցել է երկու ուղղություն՝ **ավտորիտար և մարդասիրական**: Առաջինի համար պարադրամբը և պատիժը համարվում են ուսուցչի և աշակերտների փոխհարաբերությունների կազմակերպման հիմնական ձևեր: Երկրորդը՝ առաջադրված նպատակին հասնելու պայման է համարում սերը երեխայի նկատմամբ:

Դեռևս միջնադարում մշակված և այսօր էլ կիրառվող ավտորիտար մանկավարժությանը ներհատուկ է, որ մեծը որոշի, թե ինչն է երեխայի համար լավ կամ վատ: Այդ դեպքում երեխան ընկալվում է սոսկ որպես մանկավարժական գործընթացի «օբյեկտ»: Մարդասիրական (հումանիստական) մանկավարժության համար երեխայի անձը մանկավարժական գործընթացի և՛ «օբյեկտ» է, և՛ «սուբյեկտ»: Դաստիարակվողն ինքն է դաստիարակի հետ միասին որոշում իր նպատակները, գտնում իր տեղը կյանքում:

Ժամանակակից մանկավարժության զարգացման հիմնական ուղին ձևակերպվում է որպես դաստիարակության հումանիստական հայեցակարգ: Հումանիստական մանկավարժության հիմնական խնդիրն է անձի զարգացումը, իսկ դաստիարակության նպատակն է՝ ապահովել անձի ընդհանուր մշակութային, բարոյական և մասնագիտական մակարդակը:

Մանկավարժական գործընթացի հումանացումը ենթադրում է.

- Մերժել ավտորիտար մանկավարժությանը ներհատուկ՝ ճնշումը սովորողի անձի վրա, դրա փոխարեն ընդունել անձի ազատությունը և ինքնուրույն գործելու իրավունքը, ձևավորել անհրաժեշտ որակներ առանց բռնության:
- Ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի սովորողը ակտիվորեն ընդգրկվի ուսումնական գործունեության մեջ:
- Ստեղծել ուսուցիչ-աշակերտ համագործակցության այնպիսի ձևեր ու մեթոդներ, որոնց արդյունքում կձևավորվի մարդասիրական արժեքային համակարգով անհատ:
- Ակտիվացնել և խթանել սովորողի ինքնազարգացման ձգտումը: Վերջինիս համար ստեղծել պայմաններ. «մանկավարժը ոչ թե «վեր» է աշակերտից, այլ աշակերտի «հետ» է»:
- Հարգել սովորողի իրավունքներն ու ազատությունները:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ ԳՈՐԾԻՄԱՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հաղորդակցումը մանկավարժական գործընթացի կարևորագույն բաղադրիչներից է և ունի ուսուցանող, դաստիարակող և զարգացնող նպատակ: Այն միտված է հաղորդակցվող կողմերի (ուսուցչի և աշակերտի) զարգացմանը:

Հաղորդակցումն ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման կարևորագույն միջոց է: Դրա շնորհիվ ուսուցիչն ավելի մոտիկից է ճանաչում իր աշակերտներին և տեղեկություններ ստանում նրա այս կամ այն արարքի և արժեքային համակարգի մասին:

Գիշտ կազմակերպված մանկավարժական հաղորդակցումը նպաստում է՝

- երեխաների ճանաչողության զարգացմանը,

- տեղեկությունների փոխանակմանը,
- գործունեության կազմակերպմանը,
- ինքնահաստատմանը,
- ապրումակցմանը:

Հաղորդակցման ճիշտ կազմակերպման շնորհիվ ուսուցման գործընթացում տարածում գտած «օբյեկտ-սուբյեկտ» մոդելը վերածվում է նոր՝ «սուբյեկտ-սուբյեկտ» մոդելի, որում երկու կողմերն էլ (սովորող՝ օբյեկտ, սովորեցնող՝ սուբյեկտ) միաժամանակ և՛ սովորող են, և՛ սովորեցնող: Այս պարագայում որքան բարձր է մանկավարժի մասնագիտական կուլտուրան, այնքան ավելի բարձր է երկխոսության արդյունքը:

Մանկավարժական կուլտուրայի բաղադրիչներն են՝ մասնագիտական գիտելիքները, ստեղծագործական գործունեությունը, մանկավարժական վարպետությունը: Մարդու ընդհանուր կուլտուրայով է պայմանավորված նրա վարքագիծը, վերաբերմունքը: Կուլտուրան նրա ներաշխարհի և արտաքին գործունեության ներդաշնակությունն է:

Այսպիսով, տարբերակվում են անձի կուլտուրայի երկու հիմնական մակարդակներ.

- Ներքին՝ հոգևոր կուլտուրա, որը նրա զգացմունքների, գիտելիքների, բարոյական սկզբունքների, հանգստանքների ընկալումն է:

- Արտաքին՝ շփման ընթացքում տեսանելի, վարքի, արտաքին տեսքի և ձևերի կուլտուրա, որը ներքին կուլտուրայի արտաքին դրսևորման ձևն է:

Նորարարական տեխնոլոգիաների կիրառումը համարվում է մանկավարժական գործիմաց մոտեցման իրականացման ուղի: Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներն «աշխատում են» միայն ճիշտ մտածված և կազմակերպված համագործակցման և հաղորդակցման դեպքում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ


ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՐԴԻՎԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Արդի մանկավարժության գերխնդիրներից մեկը ուսուցման ակտիվացման և արդյունավետության բարձրացման նոր եղանակների որոնումն է: Այս խնդրի լուծմանը ձեռնամուխ է եղել համաշխարհային մանկավարժական հանրությունը: Այսօր ձևավորվել են մի շարք մոտեցումներ, զարգացնող ուսուցման տեխնոլոգիաներ: Մի շարք գիտնականներ են մշակել այդ տեխնոլոգիաները, բայց մենք կանգ կառնենք Բենջամին Բլումի գիտելիքների լրիվ յուրացման տեխնոլոգիայի վրա: Ըստ Բլումի տաքսոնոմիայի (համակարգի)՝ ուսուցման գործընթացին հատուկ է հիմնական աստիճան՝ գիտելիք, իմաստավորում, կիրառում, վերլուծություն, համադրում, կշռադատում կամ գնահատում: Բլումը գտնում էր, որ ուսուցման ընթացքում աշակերտը ոչ միայն ձեռք է բերում գիտելիքների հանրագումար և մտապահում (այս աստիճանը մա անվանում է **գիտելիք**), այլև համադրում է դրանք իր նախնական գիտելիքների հետ (**իմաստավորում**), նոր գիտելիքները դարձնում կիրառական (**կիրառում**), հետո գնում է դեպի գիտելիքի խորացում (**վերլուծություն**), որին հաջորդում է **համադրման** աստիճանը, երբ սովորողը ընդլայնում է իր յուրացրած գիտելիքները, համակարգում դրանք

և վերջապես որոշումներ կայացնում (**գնահատում**):

Գիտելիքը ուսուցման հիմնաքարն է: **Իմաստավորման** փուլի ընթացքը սովորողի մոտ ձևավորվում է նյութի իմաստն ընկալելու, համեմատելու, բացատրելու կարողություն: Այս աստիճանը բարձր է, քան գիտելիքի պարզ մտապահումը: **Կիրառումը** ենթադրում է կյանքում հանդիպող հիմնախնդիրները լուծելիս յուրացրած նյութը կիրառելու կարողություն: **Վերլուծությունը** ենթադրում է ուսումնասիրվող նյութի տրոհում և մասերի առկա կապերի դիտարկում: **Համադրումը** առանձին գաղափարների միացումն ու զուգակցումն է և այդ նյութերի միջև նոր կապերի ձևավորումը: **Կշռադատման** աստիճանում տեղի է ունենում ամբողջ նյութի գնահատումը նոր մակարդակում:

Հաշվի առնելով գործիմաց ուսուցման նպատակները՝ Բլումի սանդղակում մի աստիճան պակասում է: Դա վերջնական նպատակն է՝ **նորի ստեղծումը**: Ուրեմն ուսուցման նպատակների «Բուրգը» կունենա հետևյալ տեսքը.



Նման մոտեցումը ուսուցման գործընթացը կարող է դարձնել ավելի արդյունավետ, քանի որ այս դեպքում նորի ստեղծումն է դիտարկվում որպես ուսուցման առավել բարձր նպատակ:

Ստացված երկրաչափական պատկերը բնութագրում է մանկավարժական ողջ գործընթացի անընդհատությունն ու շարունակականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մ. Աստվածատրյան, Ա. Արնաուդյան, Ս. Վարդումյան, Ձեռնարկ տարրական դպրոցի

ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման համար, Այռեքս, Եր., 2003թ.

2. **Մ. Աստվածատրյան, Ա. Արմաուդյան, Ի. Օհանովա**, Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործում, Այռեքս, Եր., 2003թ.

3. **Մ. Աստվածատրյան, Ռ. Պետրոսյան, Լ. Երեմյան**, Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Այռեքս, Եր., 2001թ.

4. **Ս. Վարդումյան, Ա. Սարգսյան, Լ. Ստրուցենկո**, Գործիմաց մոտեցում. տեսություն և պրակտիկա, Այռեքս, Եր., 2004թ.

5. Ժամանակակից մանկավարժական մոտեցումները գործողության մեջ, Նոյան Տապան, Եր., 2005թ.

6. **Յու. Ամիրջանյան**, Մանկավարժություն, Եր., 2005թ.

ПРОФЕССИОНАЛЬНЫЙ ПОДХОД КАК ОСНОВНОЙ ПУТЬ К ОБРАЗОВАТЕЛЬНОЙ РЕФОРМЕ

А. С. САФАРЯН

В работе представлена компетенции сущность отношения и условия их реализации в современной образовательной системе.

Автор отмечает важность и роль гуманизации, индивидуализации, коммуникации в системе образования.

THE EFFICIENT APPROACH AS THE MAIN WAY OF PEDAGOGICAL EDUCATIONAL IMPROVEMENT

A. S. SAFARYAN

The essence of efficient approach and the conditions of realization in modern educational system are represented in the article. The author emphasizes the role of humanistic education, individualization and communication in the efficient educational system.

ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԻՄԱՑԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գ. Կ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

*Խ. Աթուլյանի անվան ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ*

Մանկավարժական գիտահետազոտական աշխատանքների և գիտական գործունեության իրականացման ոլորտում նորարարական կրթական ծրագրերի աջակցման և իրականացման կազմակերպամեթոդական, գիտահետազոտական համակարգի ապահովման պատասխանատվությունն ընկած է մանկավարժական կրթություն ապահովող բուհերի վրա, որոնք էլ պետք է հանդես գան որպես